ՀՏԴ 796.091 DOI: 10.53068/25792997-2025.2.15-27

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ֆ.Գ.Ղազարյան, Ա.Գ. Ստեփանյան, Յու. Գ. Գրիգորյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Ամբիոն, պատմություն, ֆիզիկական կուլտուրա, ֆիզիկական դաստիարակություն, մեթոդիկա, գիտություն, կրթություն, վերապատրաստում, ուսումնական գրականություն, պրակտիկա, կադրերի պատրաստում, գիտական դպրոց, սպորտային մանկավարժություն:

Հետազոտության արդիականություն: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 80-ամյակի առթիվ բնական և անհրաժեշտ է վերադառնալ բուհի ստեղծման ակունքներին, ամփոփել անցած ուղին, գնահատել ներկան և ուրվագծել ապագան: Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնը ոչ միայն առաջիններից էր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կրթական համակարգում, այլև մասնագիտական կադրերի պատրաստման, ուսումնական գրականության ստեղծման, գիտահետազոտական ուղղությունների ձևավորման կարևորագույն կենտրոն է: Ժամանակակից կրթական համակարգի և ֆիզկուլտուրային կրթության պահանջների փոփոխության պայմաններում անհրաժեշտ է վերահիմաստավորել ամբիոնի դերը, ամրապնդել նրա գիտական, մանկավարժական և մեթոդական ձեռքբերումները, և այդ համատեքստում հոդվածի թեման ունի բարձր գիտակրթական ու մշակութային արժեք:

Միևնույն ժամանակ արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ նման ուսումնասիրությունները նպաստում են ոչ միայն անցյալի գնահատմանը, այլև ապագայի ռազմավարությունների ձևավորմանը: Ամբիոնի փորձի վերլուծությունը կարող է ծառայել որպես կարևոր ուղեցույց՝ թե՛ պետական կրթական քաղաքականության մշակման, թե՛ մարզական կրթության ոլորտում նորարարությունների ներդրման համար: Հատկապես կարևոր է նկատի ունենալ, որ ֆիզիկական դաստիարակությունը ներկայումս դիտարկվում է ոչ միայն որպես առողջության պահպանման միջոց, այլև՝ սոցիալական ինտեգրման, արժեքային դաստիարակության և երիտասարդության քաղաքացիական ակտիվության ձևավորման գործիք:

Հետազոտության նպատակն է՝ ներկայացնել «Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկա» ամբիոնի 80-ամյա զարգացման ուղին, ինչպես նաև ուրվագծել ամբիոնի հետագա զարգացման հնարավոր հեռանկարները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Վերհանել «Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկա» ամբիոնի ձևավորման պատմական էվոլուցիան և հիմնադիր անձանց ավանդը:
2. Ներկայացնել ամբիոնի գործունեությունը կրթական ծրագրերի, ուսումնական գրականության ստեղծման, մանկավարժական պրակտիկաների կազմակերպման և կադրերի պատրաստման ոլորտներում:
3. Լուսաբանել ամբիոնի գիտական դպրոցի ձևավորման և գիտահետազոտական ուղղությունների զարգացումների ընթացքը:
4. Ներկայացնել ամբիոնի ներդրումը հանրապետական և միջազգային գիտակրթական համագործակցությունների և վերապատրաստումների կազմակերպման գործում:
5. Վերլուծել ամբիոնի ներկայիս մարտահրավերները և ապագայի զարգացման հիմնական ուղիները՝ հիմք ընդունելով ժամանակակից կրթության պահանջները:

Հետազոտության մեթոդներն են՝ պատմավերլուծական և փաստագրական նյութերի համադրությունները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնը, ըստ պաշտոնապես ճանաչված կարգավիճակի, իր պատմությունը սկսել է 1945 թվականի հուլիսի 21-ին: Սա բուհի առաջին ամբիոնն էր մարմնամարզության, աթլետիկայի, լողի, ըմբշամարտի և ծանրամարտի ամբիոնների շարքում:

Ինստիտուտի առաջին ամբիոնի ստեղծման ակունքներում կանգնած էր ֆիզիկական դաստիարակության բնագավառի կազմակերպիչ, բուհի առաջին ռեկտոր, Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական ինստիտուտի առաջին շրջանավարտներից՝ Հայկ Եսայի Փարսադանյանը [33]:

80 տարեկան, բայց միշտ երիտասարդ ամբիոնը 1945 թվականին ընդամենը երեք անխոնջ մշակներով՝ Հայկ Փարսադանյան, Քնարիկ Մարգարյան և Ազատ Գալուստյան, ձեռնամուխ եղան հեռահար ու նպատակասլաց գործունեության՝ ձևավորել ամբիոնի կոլեկտիվ, ստեղծել նյութատեխնիկական բազա, մշակել ծրագրեր, մեթոդական ուղեցույցեր ու դիդակտիկ նյութեր:

Այս փաստը վկայում է այն մասին, որ ամբիոնի գործունեության հիմքում միշտ եղել է նախաձեռնողականությունը և ստեղծարար մոտեցումը: Փոքր կոլեկտիվով մեծ գործի սկիզբը հետագայում դարձել է ամբիոնի ինքնության կարևորագույն հատկանիշը:

Իր գոյության 80 տարիներին ամբիոնը հանդիսացել է ոչ միայն բարձր որակավորմամբ կադրեր պատրաստող դարբնոցի կարևոր օղակ, այլև անխոնջ աշխատանք է տարել «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» գիտական ուղղության հիմնադրման ու զարգացման գործում:

Պատմական տեսանկյունից կարելի է ասել, որ ամբիոնը եղել է ոչ միայն կրթական, այլև գիտական շարժման նախաձեռնողը: Այն ձևավորեց գիտական դպրոց, որը հետագայում մեծ ազդեցություն ունեցավ Հայաստանի սպորտային մանկավարժության և գիտահետազոտական ոլորտի վրա:

Այսօր երախտագիտությամբ ենք հիշում ամբիոնի նախկին դասախոսներին և անձնակազմին՝ Ք. Մարգարյան, Մ. Մամիկոնյան, Փ. Բոյախչյան, Ս. Մալոյան, Վ. Թաթյան, Յու. Կուպալյան, Ն. Գրաբովոսկայա, Մ. Աբրամով, Ռ. Մելիքսեթյան, Ա. Եղիազարյան, Ա. Գրիգորյան, Ա. Գուլոյան, Ս. Ենգոյան, Գ. Մալոյան և այլք:

Տարբեր ժամանակներում ամբիոնը ղեկավարել են կրթության, ֆիզիկական դաստիարակության ու սպորտային պատրաստության համակարգի գործիչներ, հայտնի գիտնականներ ու ուսուցիչներ: Առաջին ռեկտորից ու առաջին ամբիոնի վարիչից հետո ամբիոնի գործունեությունը ղեկավարել են Ֆ. Ղազարյանը, Ռ. Մելիքսեթյանը, Յու. Կուպալյանը, Ա. Եղիազարյանը, Է. Հովակիմյանը, Ա. Գրիգորյանը, Յու. Գրիգորյանը, Ա. Ստեփանյանը:

Ամբիոնի ղեկավարների հերթափոխը ցույց է տալիս գիտական ու մանկավարժական ուղղությունների զարգացումը. յուրաքանչյուր ղեկավար իր հետ բերել է նոր գաղափարներ, որոնք ամբիոնին հնարավորություն են տվել մնալ ժամանակի պահանջներին համընթաց:

Ֆիզկուլտուրային կրթության արդիականացմանը զուգընթաց ամբիոնին հանձնարարվել է մշակել և դասավանդել նոր ուսումնական առարկաներ՝ «Մաթեմատիկական վիճակագրության հիմունքները ֆիզիկական դաստիարակությունում և սպորտում», «Սպորտի տեսություն», «Մասնագիտության ներածություն», «Պատանեկան սպորտի հիմունքներ», «Մանկավարժական հսկողությունը և կառավա-

րումը սպորտում», «Առողջ ապրելակերպի հիմունքներ», «Մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգ», «Տեղեկատվական տեխնոլոգիաները ֆիզիկական դաստիարակության ոլորտում» և այլն:

Հիշատակման են արժանի ամբիոնի ձեռքբերումները ուսումնամեթոդական գործունեության, դասավանդվող բոլոր առարկաների մայրենի լեզվով ուսումնական գրականության, մասնագիտական և մանկավարժական պրակտիկաների ծրագրերի պատրաստման և հրատարակման առումով: Դրվեցին ֆիզկուլտուրային կրթության հայեցի իրականացման հիմքերը: Դրանք ծրագրեր, չափորոշիչներ, դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ են՝ նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության [23, 24], դպրոցական տարբեր տարիքի ֆիզիկական դաստիարակության [10, 11, 21, 22, 28, 30, 31, 32], կրթական գործընթացի տեխնոլոգիականացման [29], մեծահասակ բնակչության ֆիզիկական դաստիարակության [6, 9], ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի [13, 16, 17, 20] սպորտային պատրաստության հիմունքների [14, 15], սպորտային ընտրության [2, 25], սպորտային գիտության [5, 18, 19], պրակտիկաների [26, 27, 30], ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի [3, 12]: Այս բոլորը մեծապես նպաստեցին ապահովել ուսանողների ֆիզկուլտուրային–սպորտային կրթությունը և ինքնակրթությունը:

Հրատարակված գիտական և մեթոդական աշխատանքները տասնամյակներ շարունակ ծառայել են որպես հիմնարար ուսումնական նյութ ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատություններում, այլև հանրապետության դպրոցներում ու մարզադպրոցներում: Դրանք ներկայացնում են գիտական և մեթոդական մտքի համակարգված արտահայտություն, որն ուսուցիչների և մարզիչների նոր սերնդի մասնագիտական պատրաստության ու գործունեության համար հուսալի տեսամեթոդական և գործնական հիմք է:

Միևնույն ժամանակ, այդ աշխատանքները նպաստել են ֆիզիկական դաստիարակության համակարգի գիտական հիմնավորմանը և արդիականացմանը՝ ձևավորելով կրթական և մարզական քաղաքականության զարգացման տեսլական: Դրանք ոչ միայն ամրապնդել են մասնագիտական կրթության որակը, այլև կարևոր դեր են խաղացել ազգային մակարդակում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի կայուն զարգացման գործընթացներում:

Ամբիոնը մշտապես մասնակցում է միջազգային գիտաժողովների, սեմինարների և գործընկերային ծրագրերի՝ նպաստելով փորձի փոխանակմանը, ուսումնա-

գիտական կապերի խորացմանը և ոլորտային առաջատար դիրքերի պահպանմանը: Նման ակտիվությունը հնարավորություն է տալիս մշտապես հետևել միջազգային գիտական միտումներին, ապահովել կրթական ծրագրերի արդիականացումը և ներդնել նորարարական մեթոդներ: Ամբիոնը նաև ակադեմիական համագործակցության հարթակ է՝ տարբեր երկրների բուհերի և հետազոտական կենտրոնների հետ գիտահետազոտական և ուսումնադաստիարակչական ծրագրերի համատեղ իրականացման համար:

Սա վկայում է ամբիոնի միջազգային ճանաչման և գիտական կապերի մասին: Ամբիոնը դարձավ այն եզակի կառույցներից մեկը, որը կարողացավ դուրս գալ տեղական գիտական շրջանակներից և դառնալ համաշխարհային գիտական համայնքի մասնակից:

Ամբիոնի դասախոսական կազմը ներգրավված է ինչպես կրթական, այնպես էլ գիտահետազոտական ծրագրերի իրականացման գործընթացում: Նրանց կողմից ձևավորվել է այնպիսի արդիական կրթական միջավայր, որը խթանում է ուսանողների մասնագիտական և անձնային աճը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի ուժերով պատրաստվել են 167 աշխատանքներ՝ մենագրությունների, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, ուսումնական ծրագրերի տեսքով, ձեռք են բերվել գյուտերի հավաստագրեր: Մենագրությունների, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, պետական ծրագրերի գործում առանձնապես մեծ են Ֆ. Ղազարյանի, Ռ. Մելիքսեթյանի, Յու. Գրիգորյանի և Ա. Ստեփանյանի ջանքերը:

Մեր իրականության մեջ առաջին անգամ հրատարակվեցին «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դպրոցական դասագրքեր (համահեղինակներ՝ Յու. Գրիգորյան, Ֆ. Ղազարյան), որոնք իրենց ճանաչումն ունեցան նաև արտերկրում [1, 4, 7, 8]:

Ֆիզկուլտուրային կրթության համակարգում իր ներդրումն ունեցավ նաև դոցենտ Ա. Ստեփանյանի կողմից վերջերս հրատարակված «Կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակությունը» ուսումնական ձեռնարկը, որ նախադրյալ է ուսանողների, ասպիրանտների, հայցորդների, դասախոսների, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և աշակերտների ծնողների գիտելիքների խորացման և ընդլայնման համար [33]:

Ամբիոնը բոլոր տեսակի պրակտիկայի կազմակերպման և անցկացման կենտրոն է: Տարբեր տարիներին ուսումնական գործընթացի այս բաժնի ղեկավարներն են եղել Ք. Մարգարյանը, Փ. Բոյախչյանը, Հ. Բաբայանը, Յու. Գրիգորյանը, Մ. Բարբարյանը:

Ինչ վերաբերում է ամբիոնի գիտական դպրոցի ձևավորմանը, ապա նրա ավանդույթները դրվել են դեռևս 80 տարի առաջ: Սկզբնական շրջանում հետազոտության առաջնահերթ ուղղություններն էին երկրի բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական զարգացման, շարժողական պատրաստվածության, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմության հարցերը: Հետագայում ամբիոնի դասախոսների գիտական հետազոտությունների ոլորտը զգալիորեն ընդլայնվեց: Հարկ է նշել, որ բուհում գիտական գործունեության ակունքները գնում են մեր ամբիոնի արմատները:

Պետք է նշել, որ ժամանակակից կրթության մարտահրավերների և ֆիզկուլտուրային կրթության բարեփոխումների պայմաններում ամբիոնը շարունակում է առաջատար դեր կատարել՝ նոր ուսումնական ծրագրերի մշակման, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման, գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման ուղղություններով, որոնք լայն կիրառություն են գտել հանրապետության կրթական և մարզական հաստատություններում:

Այդ առումով մշակվել են Հայաստանի նախադպրոցականների և դպրոցականների ֆիզիկական դաստիարակության նոր չափորոշիչ ծրագրեր [13, 27], որոնց արդյունավետ ներդրումն ապահովվում է ֆիզիկական դաստիարակության հրահանգիչների, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և բուհերի ֆիզիկական դաստիարակության դասախոսների մասնագիտական վերապատրաստման լայնածավալ աշխատանքների միջոցով: Այս գործընթացը նպաստում է համալսարանական գիտելիքների և նախադպրոցական, դպրոցական և բուհական պրակտիկաների անքակտելի կապին, ինչը հիմնարար պայման է մասնագիտական կադրերի արդյունավետ պատրաստման համար:

Խոսուն է նաև ամբիոնի մարզչական գործունեությունը՝ սեղանի թենիսում (Ա. Պողոսյան, Ս. Հովեյան), գեղարվեստական մարմնամարզությունում (Ք. Բաղդասարյան), ֆիթնեսում (Ա. Պապիկյան), ձյուդոյում (Մ. Բարբարյան), ակրոբատիկայում (Վ. Թաթյան, Ս. Խաչատրյան), բռնցքամարտում (Ա. Շախյան) և ըմբշամարտում (Ա. Եղիազարյան): Հիշատակման է արժանի այն փաստը, որ Ա. Եղիազարյանի մարզիկը 2004 թվականին դարձավ 28–րդ օլիմպիական խաղերի (Աթենք, 2004) հաղթող:

Ամբիոնի մագիստրանտները, ասպիրանտները, հայցորդները, դասախոսներն ուսումնասիրել են այնպիսի գիտական ուղղություններ, ինչպիսիք են՝ շարժողական ընդունակությունների մշակման, մարզական ընտրության, շարժումների կառավարման և գենդերային առանձնահատկությունները, մասնագիտական և կիրառական ֆիզիկական պատրաստվածության, միջառարկայական կապերի ձևավորման, շարժումների անհամաչափության, սպորտային պարերի, ընտանեկան ֆիզիկական դաստիարակության, նախադպրոցականների, դպրոցականների ֆիզիկական դաստիարակության արդիականացման, մանկավարժական պրակտիկայի, մեծահասակների ֆիզիկական դաստիարակության, օլիմպիական կրթության հիմնախնդիրները և այլն:

Ամբիոնը կարևոր դեր է կատարում նաև բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի՝ մագիստրատուրայի իրականացման գործընթացում: Այստեղ իրականացվող մագիստրոսական ծրագրերը նպաստում են ուսանողների խորացված մասնագիտական պատրաստվածությանը, գիտահետազոտական հմտությունների ձևավորմանը և ինքնուրույն գիտական մտածողության զարգացմանը:

Մագիստրոսական կրթական ծրագրերն ուղղված են ոչ միայն ժամանակակից պահանջներին համահունչ մասնագետների պատրաստմանը, այլև ապագա հետազոտողների և մանկավարժների ձևավորմանը, որոնք կարող են շարունակել իրենց կրթությունը ասպիրանտուրայի մակարդակով:

Ամբիոնի կարևորագույն ձեռքբերումներից է նաև հետբուհական կրթության՝ հատկապես ասպիրանտուրայի և հայցորդական ինստիտուտի համակարգված զարգացումը: Ամբիոնում իրականացվում է ասպիրանտների և հայցորդների նպատակային պատրաստում ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտերկրի մի շարք երկրների համար, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Սիրիա և այլն: Այս գործընթացը վկայում է ամբիոնի գիտակրթական ներուժի բարձր մակարդակի և միջազգային ճանաչման մասին: Ամբիոնը դարձել է գիտական պատրաստվածության հուսալի հարթակ նրանց համար, ովքեր ձգտում են խորացնել իրենց մասնագիտական հմտություններն ու գիտական գիտելիքները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում:

Մագիստրոսական և ասպիրանտական կրթության գործընթացում ընդգրկված են ամբիոնի առաջատար դասախոսները՝ գիտությունների դոկտորներ, պրո-

ֆեսորներ և փորձառու դոցենտներ, որոնք հանդես են գալիս որպես գիտական ղեկավարներ և մասնագիտական խորհրդատուներ՝ ապահովելով կրթական ծրագրերի բարձր որակը և արդիականությունը:

Տարիներ ի վեր ամբիոնը հանդիսանում է հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գիտամանկավարժական մտքի զարգացման կենտրոն: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի ոլորտի առաջատար մասնագետների ներգրավմամբ ստեղծվեց Հայաստանի ֆիզիկական դաստիարակության համակարգը:

Այսպիսով՝ ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի, իսկ այսօր նաև ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի աշխատակիցները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի տեսության և մեթոդիկայի ժամանակակից պահանջներին համապատասխան մակարդակով շարունակում են լուծել բազմաթիվ լուրջ գիտական հիմնախնդիրներ, որոնք իրենց կենսունակությունն են ստանում մասնագիտական ոլորտում:

Հատկապես ուշագրավ է Ֆ. Ղազարյանի վաստակը, որը 40 տարեկանում դարձել է Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում սպորտային մանկավարժության առաջին դոկտորը: 1960-ականներին ստեղծված մարդու ֆիզիկական կատարելագործման խնդրի լուծման համար նրա մշակած մեթոդաբանությունը այսօր էլ կարելի է գտնել բազմաթիվ գիտական աշխատություններում: Հրատարակել է ավելի քան 300 գիտամեթոդական աշխատություններ, այդ թվում՝ դասագրքեր, մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ և գիտական հոդվածներ: Նա նախկին Խորհրդային Միության ֆիզկուլտուրային բուհերի «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա» առարկայի դասագրքի համահեղինակ է: Նրա ղեկավարությամբ ու խորհրդով պաշտպանվել են մի քանի տասնյակ դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ: Ֆ. Ղազարյանը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ է, ընտրվել է ՄԱԿ-ին առընթեր Ինֆորմատիզացիայի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության բնագավառի ականավոր գիտնականներից է եղել Ռ. Մելիքսեթյանը: Նրա գիտահետազոտական հետաքրքրություններն ուղղված էին հանրակրթական դպրոցներում սովորողների տեսական և գործնական կարողությունների համադրմանը:

Ամբիոնի աշխատակազմը այս տարիների ընթացքում իրականացրել է նաև հասարակական մեծ աշխատանք: Պրոֆեսոր Ֆ.Ղազարյանը եղել է ֆիզկուլտու-

ային կրթության համամիութենական մեթոդական խորհրդի և Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի մասնագիտական խորհրդների անդամ: Պրոֆեսոր Մելիքսեթյանը ընտրվել էր նախկին ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի գիտական խորհրդի անդամ: Պրոֆեսոր Ա. Եղիազարյանը եղել է ըմբշամարտի հավաքական թիմի գիտական ապահովման խմբի անդամ, իսկ պրոֆեսոր Է. Հովակիմյանը՝ «Արարատ» ֆուտբոլային գիտական խմբի անդամ: Ֆ. Ղազարյանը, Ե. Հակոբյանը և Մ. Բարբարյանը 065 մասնագիտական խորհրդի անդամներ են: Դոցենտ Ա. Ստեփանյանը «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպության ազգային տնօրենն է:

Այսպիսով՝ ամբիոնի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա հիմնադիրները և հետագա սերունդների ներկայացուցիչները իրենց պրոֆեսիոնալ և անձնական նվիրումով կարողացել են ձևավորել գիտական դպրոց, որի ազդեցությունը տեսանելի է թե՛ հանրապետական, թե՛ միջազգային մակարդակներում: Կրթական ծրագրերի բարելավումը, մանկավարժական պրակտիկաների արդյունավետ կազմակերպումը, մասնագիտական գրականության ստեղծումը և նորարարական մոտեցումների կիրառումը վկայում են, որ ամբիոնը մշտապես զարգացող, գիտակրթական գործընթացի պահանջներին արձագանքող կառույց է:

Ուստի, ամբիոնի անձնակազմին իր 80-ամյա պատմության ընթացքում հաջողվել է ոչ միայն պահպանել իր յուրահատկությունն ու կայացած ավանդույթները, այլև բարելավել աշխատանքի արդյունավետությունը իր գործունեության բոլոր ոլորտներում: Ամբիոնը հաստատվել է որպես ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման, ուսումնական գործընթացի կատարելագործման և գիտամանկավարժական մտքի զարգացման առանցքային կենտրոն:

Ֆիզիկական կուլտուրայի բնագավառի մասնագետների պատրաստման ոլորտում երկար տարիների արդյունավետ աշխատանքի համար ամբիոնի աշխատակիցներն արժանացել են պետական և գերատեսչական պարգևների, ինչը վկայում է նրանց աշխատանքի կարևորության և բարձր պրոֆեսիոնալիզմի մասին:

Այսօր ամբիոնում բեղմնավոր աշխատում են՝ 2 մանկավարժական գիտության դոկտոր–պրոֆեսորներ, 1 մանկավարժական գիտության թեկնածու–պրոֆեսոր, 7 մանկավարժական գիտության թեկնածու դոցենտներ, 3 մանկավարժական գիտության թեկնածու, 2 դոցենտ և 3 դասախոս: Գիտական ներուժը կազմում է 83,3%:

Հետազոտության արդյունքներով պարզ դարձավ, որ ամբիոնը ձևավորվել է կայուն գիտակրթական սկզբունքների վրա, որոնք ուղենիշ են դարձել ինչպես կրթական գործընթացի կազմակերպման, այնպես էլ գիտահետազոտական գործունեության արդյունավետ իրականացման համար:

Պետք է մաղթել, որ առաջիկա տարիները ամբիոնի աշխատակիցների համար դառնան նոր գաղափարների իրականացման, գիտական, կրթական հետազոտությունների և մասնագիտական կատարելության ժամանակ:

Առաջիկա տարիները բացում են նոր հնարավորություններ և հեռանկարներ, և լիահույս կարելի է ասել, որ ամբիոնը նոր փուլ է մտնում՝ ամուր գիտամեթոդական հիմքով, բարձր մասնագիտական ներուժով և հեռատես զարգացման ռազմավարությամբ:

Եզրակացություն: «Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկա» ամբիոնը իր գործունեության ընթացքում հաջողությամբ պահպանել է մասնագիտական ավանդույթները, զարգացրել գիտամանկավարժական գործունեությունը և ապահովել կրթական գործընթացի բարձր մակարդակ: Ամբիոնը նշանակալի ներդրում է ունեցել մասնագիտական կադրերի պատրաստման, ուսումնական գրականության ստեղծման, գիտական դպրոցի ձևավորման և միջազգային համագործակցության ոլորտներում: Ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան՝ ամբիոնը շարունակում է մնալ ոլորտի առաջատար կենտրոններից մեկը՝ միտված գիտական և կրթական նորարարություններին:

Ներկայիս մարտահրավերների՝ կրթական համակարգի բարեփոխումների, թվայնացման, կրթության միջազգայինացման և ուսանողակենտրոն մոտեցումների պայմաններում, ամբիոնը կանգնած է անհրաժեշտ նորացման և ռազմավարական վերակազմավորման առաջ: Այս խնդիրները հնարավոր է հաղթահարել միայն հստակ ձևակերպված զարգացման ուղեգծով և ներքին ներուժի առավելագույն օգտագործմամբ:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Վ.Բ.,Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Յու.Գ., Մինասյան Հ.Ս., Հարությունյան Ա.Ա., Ֆիզիկական կուլտուրա, Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2009, 128 էջ:

2. Բաղդասարյան Ք. Է., Գեղարվեստական մարմնամարզություն. ուսուցում և մարզում, Մենագրություն, Երևան, 2007, 114 էջ:

3. Բեգիդովա Տ.Պ., Պապանյան Գ.Մ., Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2017, 128 էջ:

4. Գրիգորյան Յու., Աբրահամյան Մ., Ֆիզիկական կուլտուրա, Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2023, 160 էջ:

5. Եղիազարյան Ա.Դ., Գիտական հետազոտությունները սպորտում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 1992, 149 էջ:

6. Եղիկով Ս.Գ. Հասուն տարիքի մարդկանց ֆիզիկական կուլտուրան, Ուսումնամեթոդական նյութեր, Երևան, 1990, 30 էջ:

7. Ծառուկյան Գ.Ն., Առաքելյան Վ.Բ., Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Յու.Գ., Մինասյան Հ.Ս., Հարությունյան Ա.Ա., Ֆիզիկական կուլտուրա, Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Երևան, Աստղիկ գրատուն, 2010, 128 էջ:

8. Ծառուկյան Գ.Ն., Առաքելյան Վ.Բ.,Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս., Հարությունյան Ա.Ա., Ֆիզիկական կուլտուրա, Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2011, 128 էջ:

9. Հակոբյան Ե.Ս., Մեծահասակ ազգաբնակչության ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի հիմունքները, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2011, 258 էջ:

10. Հակոբյան Ե.Ս., Բարբարյան Մ.Ս., Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության մեթոդիկան, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2011, 116 էջ:

11. Հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչներ և ծրագիր, 1-12 դասարաններ, Երևան, 2017, 135 էջ:

12. Հովեյան Ս.Հ., Լսողության խանգարումներով երեխաների ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի հիմունքներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2016, 93 էջ:

13. Ղազարյան Ֆ.Գ., Ակնարկներ ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության մասին, Երևան, 2017, 211 էջ:

14. Ղազարյան Ֆ.Գ., Մարդու շարժողական ընդունակությունները և բազմակողմնի ներդաշնակ զարգացումը, Մենագրություն, Երևան, 2024, 152 էջ:

15. Ղազարյան Ֆ.Գ., Շարժողական ընդունակությունների բանաձևը, Մենագրություն, Երևան, 2015, 129 էջ:

16. Ղազարյան Ֆ.Գ., Ֆիզիկական դաստիարակության տեսության ներածություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2021, 109 էջ:

17. Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության տեսություն, Դասագիրք, Երևան, 2003, 160 էջ:

18. Ղազարյան Ֆ.Գ., Կուպալյան Յու.Ե., Ստեփանյան Ա.Գ., Մագիստրոսական ատենախոսության կատարման տեխնոլոգիա, Ուսումնական ձեռնարկ, ՖԿՀ-ՊԻ, Երևան, 2008, 106 էջ:

19. Ղազարյան Ֆ.Գ., Ստեփանյան Ա.Գ., Սպորտային մանկավարժության գիտական ներուժը: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012, 88 էջ:

20. Ղազարյան Ֆ.Գ., Ստեփանյան Ա.Գ., Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013, 183 էջ:

21. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին (ձեռնարկ ուսուցիչների և մարզիչների համար), Երևան, 1991, 169 էջ:

22. Մկրտչյան Թ.Լ., Գյուղաբնակ դեռահաս դպրոցականների շարժողական պատրաստվածության կատարելագործման մեթոդիկա, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018, 98 էջ:

23. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ, Երևան, 2021, 13 էջ:

24. Նահապետյան Ե.Ն., Նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությունը, Մենագրություն, Երևան, 2018, 144 էջ:

25. Շախյան Ա.Հ. Սկզբնական ընտրության ժամանակակից մոտեցումները բռնցքամարտում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, 2019, 78 էջ:

26. Պապիկյան Ա.Ռ., Մանկավարժական պրակտիկա, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012, 160 էջ:

27. Պողոսյան Ա.Վ., Մարզչական պրակտիկա, Երևան, 2008, 39 էջ:

28. Ստեփանյան Ա. Գ. Կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակությունը, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2025, 249 էջ:

29. Ստեփանյան Ա.Գ., Տեղեկատվական տեխնոլոգիաները ֆիզկուլտուրային կրթության համակարգում, Մենագրություն, Երևան 2015, 176 էջ:

30. Ստեփանյան Ա.Գ., Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկան մագիստրատուրայում, Ուսումնական ձեռնարկ, ՖԿՀՊԻ, Երևան, 2009, 60 էջ:

31. Ստեփանյան Ա.Գ., Գրիգորյան Յու.Գ., Գաբրիելյան Հ.Հ., Բարբարյան Մ.Ս., Մուրադյան Դ.Գ., Նահապետյան Ե.Ն., «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսումնական նյութի պլանավորում (1-12-րդ դասարաններ), Երևան, 2015, 256 էջ:

32. Ստեփանյան Ա.Գ., Տնային հանձնարարությունները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2014, 128 էջ:

33. Казарян Ф.Г., Этюды о кафедре ТФВ института. Материалы респ. научно-метод. конференци, Ереван, 2005, с. 11-13.

TTHE CHAIR OF THEORY AND METHODS OF PHYSICAL EDUCATION IS 80 YEARS OLD: HISTORICAL PERSPECTIVE, PRESENT, OUTLINES OF THE FUTURE

F. G. Kazaryan, A. G. Stepanyan, Yu. G. Grigoryan,
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Chair, history, physical culture, physical education, methodology, science, education, professional development, educational literature, practice, personnel training, scientific school, sports pedagogy.

Research relevance: This article is dedicated to the historical development and current achievements of one of the main departments of the Armenian State Institute of Physical Culture and Sports, established in 1945. The authors highlight the department's contribution to the modernization of physical education, development of curricula and methodological literature, training of scientific-pedagogical personnel, and advancement of sports pedagogy. Emphasis is also placed on the department's ongoing engagement in research, professional training, and international academic collaboration.

Research aim. The aim of this study is to provide a comprehensive analysis of the 80-year old development of the Chair of Theory and Methods of Physical Education, as well as to identify prospects for its further advancement.

Research methods and organization: To achieve the aim and objectives of the study, historical-analytical and comparative methods of document analysis were applied.

Conclusion: The Chair of Theory and Methods of Physical Education has successfully preserved professional traditions, advanced scientific and pedagogical work, and maintained a high standard of education throughout its history. The department has made a significant contribution to the training of professional personnel, the develop-

ment of educational literature, the establishment of a scientific school, and the promotion of international cooperation. In accordance with modern educational requirements, it remains one of the leading centers focused on scientific and educational innovation.

КАФЕДРЕ ТЕОРИИ И МЕТОДИКИ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ -80 ЛЕТ: ИСТОРИЧЕСКИЙ РАКУРС, НАСТОЯЩЕЕ, КОНТУРЫ БУДУЩЕГО

Ф. Г. Казарян, А. Г. Степанян, Ю. Г. Григорян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова. Кафедра, история, физическая культура, физическое воспитание, методика, наука, образование, повышение квалификации, учебная литература, практика, подготовка кадров, научная школа, спортивная педагогика

Актуальность исследования. Статья посвящена истории становления и современным достижениям одной из первых кафедр Государственного института физической культуры и спорта Армении, основанной в 1945 году. Раскрывается вклад кафедры в модернизацию физического воспитания, разработку учебных программ и методической литературы, подготовку научно-педагогических кадров, а также развитие спортивной педагогики. Особое внимание уделено научно-исследовательской деятельности, повышению квалификации и международному академическому сотрудничеству.

Цель исследования. Целью настоящей работы является всесторонний анализ 80-летнего пути развития кафедры теории и методики физического воспитания, а также определением перспектив дальнейшего развития.

Методы исследования. Для реализации цели исследования и решения поставленных задач применялись историко-аналитический и сравнительный методы анализа документальных материалов.

Краткие выводы. Кафедра теории и методики физического воспитания на протяжении своей деятельности успешно сохраняла профессиональные традиции, развивала научно-педагогическую работу и обеспечивала высокий уровень образовательного процесса. Кафедра внесла значительный вклад в подготовку профессиональных кадров, создание учебной литературы, формирование научной школы

и развитие международного сотрудничества. В соответствии с современными требованиями образования кафедра продолжает оставаться одним из ведущих центров, ориентированных на научные и образовательные инновации.

Տեղեկություններ հեղինակների մասին

Ղազարյան Ֆրունզիկ Գաբրիելի՝ մ.գ.դ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի պրոֆեսոր, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան: E.mail: frunz.ghazaryan@sportedu.am. ORCID: 0009-0000-7370-9238

Ստեփանյան Արտակ Գառնիկի՝ մ.գ.թ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան: E.mail: artak.stepanya@sportedu.am, ORCID: 0009-0006-0714-2505

Գրիգորյան Յուրա Գրիգորի՝ Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան: E.mail: yura.grigoryan@sportedu.am

Information about the authors

Frunzik Gabriel Ghazaryan, Doctor of Pedagogical Sciences, Professor of the Chair of Theory and Methodology of Physical Education and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, Email: frunz.ghazaryan@sportedu.am ORCID: 0009-0000-7370-9238.

Artak Garnik Stepanyan, PhD, Associate Professor, Head of the Department of Physical Education Theory, Methodology and Adaptive Physical Culture, State Institute of Physical Culture and Sports of Armenia, Yerevan, Armenia. E-mail: artak.stepanya@sportedu.am, ORCID: 0009-0006-0714-2505

Yura Grigor Grigoryan, Associate Professor of the Chair of physical education and methodology and adaptive physical culture, Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia. E.mail: yura.grigoryan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 26.05.2025–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 27.05.2025–ին:
Գրախոս՝ կ.գ.թ., դոցենտ Տ. Պետրոսյան